



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

19.05.2022թ.

**ՈՐՈՇՈՒՄ 376-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ՎԱՆՔԻ ՏԱՓ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 15/10 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՍ ԿԱՌՈՒՑԱԾ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑՎԱԾ 183,7ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՏՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՈՒ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, 0,00563ՀԱ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՎ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՍԵՅՐԱՆ ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 2019 թվականի դեկտեմբերի 3-ի «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» թիվ 225-Ն ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2 կետով, 35-րդ կետի դ) ենթակետով, Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով Գորիս համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 15-ի թիվ 15-Ա որոշման դրույթները, և քննության առնելով Գորիս քաղաքի բնակիչ Սեյրան Արզումանյանի 2021 թվականի հունվարի 29-ի թիվ 360 դիմումը

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝**

1. Գորիս քաղաքի Վանքի տափ թաղամասի թիվ 15/10 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման գոտում՝ Սեյրան Արզումանյանի կողմից ինքնակամ կառուցված, օրինականացված և համայնքային սեփականություն գրանցված 56.3քմ արտաքին /40.7քմ ներքին/ մակերեսով ավտոտնակը՝ (վկ.Ո10052022-09-0047), (56.3x1100=62000) վաթսուներկու հազար ՀՀ դրամով, 127.4քմ արտաքին (108.0քմ ներքին) մակերեսով օժանդակ շինությունը (127.4x2200=280300) երկու հարյուր ութսուն հազար երեք հարյուր ՀՀ դրամով, և 0.00563հա մակերեսով սպասարկման հողատարածքը (56.3x810=45600) քառասունհինգ հազար վեց հարյուր ՀՀ դրամով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարել Սեյրան Արզումանյանին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:



**ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ**

2022/19/05  
Բ.Գորիս